# Գավառի պետական համալսարանի 2023-2025թթ. ռազմավարական ծրագրի իրականացման գործողությունների միջնաժամկետ պլան

| հ/հ | Խնդիրը | Գործողությունները | Ժամկետը | Պատաս խանատու ստորաբա ժանումները /պատասխանա տուները/ | Ռեսուրսները | | Հնարավոր խոչընդոտները | Արդյունավետության ակնկալվող գնահատման ցուցչիները |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | Առկա | Պահանջ վող | | |
| **I. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԻՉՆԵՐԸ ԿՐԹԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ** | | | | | | | | |
| **Նպատակը՝**<br>1.1. Բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերի արդյունավետ իրականացում, նորարարական մոտեցումների կիրառմամբ կրթական գործընթացի որակի ապահովում և շարունակական բարձրացում, աշխատաշուկայի պահանջներին համապատասխանող, տեսական և գործնական գիտելիքներով զինված, մրցունակ մասնագետների պատրաստում,<br>1.2.ուսանողների սոցիալ-մշակութային զարգացմանը նպատակաուղղված աշխատանքների արդյունավետության բարձրացում, ազգային և համամարդկային արժեքներ կրող, ակտիվ դիրքորոշում և պատասխանատվության զգացում ունեցող, ընդհանուր և մասնագիտական բարեվարքության կանոնների տիրապետող քաղաքացիների ձևավորում: | | | | | | | | |
| | 1. 1. Կրթության որակի ապահովում, որակի ապահովման եվրոպական չափանիշներին և չափորոշիչներին համապատասխանող կրթական ծրագրերի իրականացում, ուսուցման և ուսումնառության արդյունավետության շարունակական բարձրացում՝ պրոֆեսորա-դասախոսական անձնակազմի ջանքերով կրթության բովանդակության հարստացման, դասավանդման մեթոդների կատարելագործման, նորարարական տեխնոլոգիաների կիրառման, ուսումնական ռեսուրսների բազմազանեցման և արդիականացման միջոցով, | 1.1.1. Կրթության որակի ապահովման ներբուհական համակարգի շարունակական բարելավում՝ որակի ապահովման կառուցակարգերի հստակեցում, շահակիցների ներգրավում որակի ապահովման գործընթացում, կրթության որակի մշտադիտարկման նոր մեթոդների և գործիքակազմի կիրառում, ԳՊՀ-ում կրթության որակի ապահովման գործընթացների համադրելիության ապահովում Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի (ԵԲԿՏ) որակի ապահովման գործընթացներին, կրթության որակի ապահովման համակարգի գործունեության արդյունավետության բարձրացում:<br>1.1.2. Մանկավարժական առաջավոր փորձի խրախուսման և տարածման ներհամալսարանական մեխանիզմների բարելավում, ուսուցման ժամանակակից մեթոդների և նորարարական տեխնոլոգիաների ներդրում և կիրառում:<br>1.1.3.Օտար լեզուներով դասավանդվող ՄԿԾ-ների մշակում, իրականացում, օտարերկրյա սովորողների ներգրավում: | 2023-2024, 2024-2025, ուսումնական տարիներ | Ուսումնագիտական գծով պրոռեկտոր, դեկաններ, ֆակուլտետների խորհուրդներ, Ակադեմիական քաղաքականության բաժին (ԱՔԲ), Որակի ապահովման բաժին (ՈԱԲ): | ԳՊՀ-ում ՄԿԾ-ների իրականաց ման համար անհրաժեշտ նյութատեխնի կական, լաբորատոր, գրադարանա յին, ուսումնամեթո դական բավարար բազա | 92.000.000 | ՀՀ Գեղարքունիքի մարզից բնակչության արտագաղթի բարձր ցուցանիշներ, դիմորդների քանակի նվազում. ուսանողների ընտանիքների սոցիալական անապահովու թյան բարձր աստիճան և ցածր վճարունակու թյուն | 1. 1. Եվրոպական որակավորումների ոլորտային շրջանակին, ՀՀ որակավորումների ազգային և ոլորտային շրջանակների բնութագրիչներին համադրելի վերջնարդյունքահեն մասնագիտական կրթական ծրագրեր,<br>1.2. Գավառի պետական համալսարանի իրականացրած կրթական և սոցիալ-մշակութային ծրագրերի արդյունավետությունից ներքին և արտաքին շահակիցների բավարարվածության աստիճանի աճ,<br>1. 3. ԳՊՀ շրջանավարտների |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 1.1.4.Պրակտիկաների բարելավմանն ուղղված համալիր միջոցառումների ծրագրի մշակում և իրականացում՝ կիրառելով աշխատանքի վրա հիմնված կրթության մեթոդներ: | | | | | | մասնագիտական իրազեկություններից գործատուների գոհունակության մակարդակի բարձրացում: |
| | 1. 2. վերջնարդյունքահեն բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերի (ՄԿԾ) շարունակական բարելավում՝ հաշվի առնելով աշխատաշուկայի արդի պահանջները, Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի որակավորումների համընդհանուր շրջանակը, ՀՀ որակավորումների ազգային (ՈԱՇ) և ոլորտային (ՈՈՇ) շրջանակները, ուսանողների կրթական կարիքները, գիտության նորագույն նվաճումները, | 1.2.1.Բակալավրիատի և մագիստրատուրայի մասնագիտական կրթական ծրագրերի (ՄԿԾ) բարելավում, արդիականացում, դրանցում ամրագրված իրազեկությունների՝ գիտելիքների, կարողությունների և հմտությունների համապատասխանեցում ՀՀ Որակավորումների ազգային և ոլորտային շրջանակներին, աշխատաշուկայի արդի պահանջներին, ԵԲԿՏ որակավորումների համընդհանուր շրջանակին, հաշվի առնելով «կանաչ կրթության» սկզբունքը՝ ըստ ՈՈՇ-ների վերջնարդյունքների, իրականացնել կրթական ծրագրերի արդիականացում, ՄԿԾ-ների մասնագրերի լրամշակում, արտաքին գնահատում:<br>1.2.2.Վերջնարդյունքահեն ՄԿԾ-ների իրականացումից ներքին և արտաքին շահակիցների բավարարվածության աճի ապահովում: | շարունակա կան | Ուսումնագիտական գծով պրոռեկտոր, դեկաններ, ֆակուլտետների խորհուրդներ, ԱՔԲ, ՈԱԲ: | | | | |
| | 1.3.ԳՊՀ-ում ըստ անհրաժեշտության առցանց և զուգակցված՝ առկա (անցանց)-առցանց ուսուցման կազմակերպում, հեռավար կրթական ծառայությունների մատուցում, | 1.3.1.ԳՊՀ էլեկտրոնային ուսուցման համակարգի և թեստավորման գործող ծրագրի համալրում ուսումնական նոր նյութերով, թեստերով, զուգահեռաբար էլեկտրոնային նոր համակարգերի մշակում և շահագործում՝ ՄԿԾ-ների, ուսումնական մոդուլների, ուսումնամեթոդական տարաբնույթ նյութերի, դասախոսությունների առցանց մատուցման նպատակով:<br>1.3.2.Լրացուցիչ, շարունակական մասնագիտական կրթության և հեռակա ուսուցման համակարգերում հեռավար ուսուցման տեխնոլոգիաների կիրառման համակարգերի բարելավում, զարգացում:<br>1.3.3.Դասախոսությունների տեսաձայնագրման հարթակի ստեղծում, շարունակական համալրում:<br>1.3.4.Համաժամանակյա թարգմանության լաբորատորիայի ստեղծում: | 2024-2025 և հաջորդող ուսումնական տարիներ | Ուսումնագիտական գծով պրոռեկտոր, դեկաններ, ֆակուլտետների խորհուրդներ, ԱՔԲ, ՄԿԾ-ների ղեկավարներ, դասախոսներ: | | | | |
| | 1.4.աշխատաշուկայում մասնագիտությունների պահանջարկի ուսումնասիրություն, | 1.4.1.Գործատուների կարիքների ուսումնասիրում, նոր մասնագիտական կրթական ծրագերի մշակում, իրականացում: | 2023-2024 ուսումնական տարի | Ուսումնագիտական գծով պրոռեկտոր, դեկաններ, | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | աշխատանքի վրա հիմնված կրթական նոր ծրագրերի մշակում և իրականացում, | 1.4.2. Հանրակրթական դպրոցնեի աշակերտների շրջանում մասնագիտությունների ընտրության նպատակով հարցումների անցկացում, առավել պահանջված մասնագիտությունների ցանկի ուսումնասիրում, ԳՊՀ-ում դրանց ներդրման հնարավորությունների ապահովում: | | ֆակուլտետների խորհուրդներ, ԱՔԲ, ՄԿԾ-ների ղեկավարներ, դասախոսներ: | | | | |
| | 1.5.հանրակրթական ուսումնական հաստատությունների հետ սերտ համագործակցության ապահովում, դիմորդների մասնագիտական կողմնորոշում և նրանց թվի ավելացում, | 1.5.1.Դիմորդների համար նախապատրաստական դասընթացների կազմակերպում և իրականացում:<br>1.5.2. Ուսանողների և դիմորդների համար ՄԿԾ-ների նկարագրերի, մասնագրերի վերաբերյալ ուղեցույցների մշակում և հրապարակում: | շարունակական գործընթաց | Ուսումնագիտական գծով պրոռեկտոր, ԱՔԲ, Արտաքին կապերի և լրատվության բաժին, ամբիոններ, հաշվապահություն, շրջանավարտների միություն և կարերիայի կենտրոն: | | | | |
| | 1.6.ուսանողների հայրենասիրական, բարոյական, հոգևոր-մշակութային, իրավական, գեղագիտական, ֆիզիկական, աշխատանքային, էկոլոգիական դաստիարակություն, պատասխանատու և ակտիվ քաղաքացիների ձևավորում, | 1.6.1.Սովորողների կրթագիտական, սոցիալ-մշակութային հետաքրքրությունների ուսումնասիրում, կարիքների վեր հանում:<br>1.6.2.Սովորողների մասնակցությամբ կրթագիտական, սոցիալ-մշակութային, սպորտային, հասարակական ուղղվածության տարաբնույթ ծրագրերի և միջոցառումների կազմակերպում և իրականացում:<br>1.6.3. ԳՊՀ ուսանողական ինքնակառավարման մարմիններին՝ ՈՒԽ-ին և ՈՒԳԸ-ին աջակցում, խրախուսում: | շարունակական գործընթաց | Ուսումնագիտական գծով պրոռեկտոր, դեկաններ, ֆակուլտետների խորհուրդներ, ԱՔԲ, ՈԱԲ, ՄԿԾ-ների ղեկավարներ, դասախոսներ, ՈՒԽ և ՈՒԳԸ նախագահներ: | | | | |
| | 1.7.ուսանողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանություն, ուսանողական ինքնավարության ապահովում, | 1.7.1. Սովորողների իրավունքներին և օրինական շահերին առնչվող կարգերի վերանայում և ներբուհական նոր ակտերի մշակում՝ սահմանելով որոշումների կայացման գործընթացներում նրանց մասնակցության մեխանիզմները:<br>1.7.2.Սովորողներին կրթության բովանդակության ձևավորման ու բարելավման, ՄԿԾ-ների վերանայման, բուհի գործունեության տարբեր ոլորտների արդյունավետության գնահատման և այլ գործառույթներում ներգրավում, նրանց պարտականությունների սահմանում: | 2023-2024 ուսումնական տարի | Ուսումնագիտական գծով պրոռեկտոր, դեկաններ, ֆակուլտետների խորհուրդներ, ԱՔԲ, ՈԱԲ, ՄԿԾ-ների ղեկավարներ, դասախոսներ: | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 1.7.3.Սովորողներին իրազեկելու տարատեսակ միջոցառումների մշակում և կազմակերպում: | | | | | | |
| | 1.8.ուսանողների սոցիալ-մշակութային, մտավոր, ստեղծագործական, լեզվական, հաղորդակցական, տեխնիկական, կազմակերպական, առաջնորդության կարողությունների զարգացում, օգտակար սոցիալական փորձի և բարձր արժեքային կողմնորոշումների փոխանցում, մասնագիտական գործունեությանը և ծառայողական առաջխաղացմանը նախապատրաստում: | 1.8.1.Սովորողների ակադեմիական աջակցության և կրթական լրացուցիչ ծառայությունների տրամադրման մեխանիզմների ակտիվացում՝ նրանց ուսումնական առաջընթացը բարելավելու նպատակով:<br>1.8.2.Հարցումների միջոցով սովորողների կարիքների բացահայտում, ոլորտի առաջատար մասնագետների բաց դասախոսությունների և նրանց հետ հանդիպումների կազմակերպում:<br>1.8.3. Կրթական առանձնահատուկ կարիք ունեցող ուսանողների համար անհրաժեշտ խելամիտ հարմարեցումներով (թեքահարթակ, սանդղակ, վերելակ, տեսողական խնդիրներ ունեցողների համար նախատեսված գրականություն և այլն) միջավայրի ստեղծում: | 2022-2023, 2023-2024 ուսումնական տարիներ | Ուսումնագիտական գծով պրոռեկտոր, ՄԿԾ ղեկավարներ, դեկաններ, ֆակուլտետների խորհուրդներ, դասախոսներ, հաշվապահություն: | | | | |

**II. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԻՉՆԵՐԸ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԵՎ ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ**

**Նպատակը՝**

2.1. Միջազգային, հանրապետական և տարածաշրջանային արդի հիմնախնդիրների, Գեղարքունիքի մարզի սոցիալ-տնտեսական զարգացման առաջնահերթությունների ու առանձնահատկությունների հաշվառմամբ համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմի և ուսանողների գիտական, հետազոտական թեմաների բազմազանեցում,

2.2. կրթական արդի տեխնոլոգիաների, ուսուցման և ուսումնառության նորագույն մեթոդների կիրառում, ‹‹Վիրտուալ համալսարան›› համակարգի բաղադրիչների համալրում, համալսարանի նորարարական ներուժի զարգացում:

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 2.1. Համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմի և ուսանողների գիտահետազոտական գործունեության խրախուսում, արդյունքների հնարավորինս ներդրում պրակտիկայում՝ նպաստելով բարձրագույն կրթության, գիտության և տնտեսության ինտեգրմանը, | 2.1.1. Հետազոտական աշխատանքների կատարումը կանոնակարգող և խրախուսող կարգերի ու գործիքակազմի լրամշակում և արդյունավետ գործարկում:<br>2.1.2. ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածուի բովանդակային և տեխնիկական պահանջների համապատասխանեցում ազգային և միջազգային շտեմարաններում ընդգրկված գիտական հանդեսներում տպագրություններին ներկայացվող պահանջներին:<br>2.1.3. ԳՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի կողմից ազգային և միջազգային շտեմարաններում ներառված գիտական հանդեսներում հրապարակվող հոդվածների թվաքանակի ավելացում: | շարունակական գործընթաց | Ուսումնագիտական գծով պրոռեկտոր, դեկաններ, ֆակուլտետների խորհուրդներ, ԱՔԲ, ՌԱԲ, ՄԿԾ-ների ղեկավարներ, դասախոսներ, հաշվապահություն: | ԳՊՀ թվայնացված ուսումնական ռեսուրսներ, գիտական ներուժի առկայություն | 17.834.000 | Դասախոսական համակազմի ակադեմիական ծանրաբեռնվածության բարձր աստիճան, ֆինանսական անբավարար միջոցներ հետազոտությունների իրականացման և | 2.1. Գիտահետազոտական գործունեությամբ զբաղվող բարձր որակավորում ունեցող կադրերի թվաքանակի աճ, երիտասարդ կադրերի ներհոսք, գիտական ներուժի աստիճանական սերնդափոխություն,<br>2.2. նորարարական տեխնոլոգիաների մշակում և գործարկում, |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 2.2. Համալսարանի բյուջեից և այլ աղբյուրներից գիտահետազոտական գործունեության ֆինանսավորման համար միջոցների ավելացում, անհրաժեշտ նյութատեխնիկական ռեսուրսների և արդիական պայմանների ապահովում, | 2.2.1.Ըստ համապատասխան ոլորտների՝ գիտահետազոտական նախագծերի մշակում, իրականացում՝ դրամաշնորհային մրցույթներին ներկայացնելու նպատակով:<br>2.2.2. Ազգային և միջազգային դրամաշնորհային ծրագրերի ֆինանսական միջոցների ներգրավում և ԳՊՀ գրադարանային պաշարների, լաբորատորիաների, համակարգչային լսարանների, մասնագիտական աշխատասենյակների հնարավորությունների համալրում, ենթակառուցվածքների բարելավում: | 2023-2024 ուսումնական տարի | Գիտական խորհուրդ, ուսումնագիտական գծով պրոռեկտոր, ԱՔԲ, ՄԿԾ ղեկավարներ, դեկաններ, հաշվապահություն: | | | տպագրությունների համար | 2.3. ‹‹Վիրտուալ համալսարան›› համակարգի բաղադրիչների գործարկում: |
| | 2.3. գիտության նորագույն նվաճումների արտացոլում ՄԿԾ-ներում, մասնագիտական ուղղվածությանը համապատասխանող գիտահետազոտական աշխատանքների արդյունքների օգտագործում կրթական գործընթացում, | 2.3.1.Սովորողների հետազոտական հմտությունների մակարդակի բարձրացում՝ հետազոտական մեթոդների և գիտական աշխատանքին առնչվող հատուկ դասընթացների մշակում, իրականացում:<br>2.3.2.Ուսանողների շրջանում գիտության և գիտահետազոտական գործունեության նկատմամբ հետաքրքրության բարձրացնում:<br>2.3.3.ԳՊՀ ամբիոնների գիտահետազոտական աշխատանքներում սովորողների ներգրավման քաղաքականության շարունակականության ապահովում՝ օժանդակելով նրանց հետազոտական հմտությունների զարգացմանը և անհատական կամ համահեղինակությամբ գիտական հրապարակումների թվաքանակի աճին:<br>2.3.4.ԳՊՀ-ում իրականացվող հետազոտական թեմանների գիտական արդյունքների ինտեգրում կրթական գործընթացին՝ նպաստելով կրթական և գիտական բաղադրիչների փոխկապակցմանը: | 2023-2024, 2024-2025 ուսումնական տարիներ | Ուսումնագիտական գծով պրոռեկտոր, դեկաններ, ֆակուլտետների խորհուրդներ, ԱՔԲ, ՄԿԾ-ների ղեկավարներ, դասախոսներ, ՈՒԳԸ: | | | | |
| | 2.4. գիտահետազոտական գործունեության ոլորտում համալսարանի համագործակցային կապերի ընդլայնում արտերկրի և հանրապետության առաջատար գիտահետազոտական ինստիտուտների, համալսարանների, ձեռնարկությունների, գործարար կառույցների հետ, համալսարանի աստիճանական ինտեգրում | 2.4.1. Ինստիտուցիոնալ մակարդակում տարբեր կառուցակարգերի միջոցով գիտահետազոտական աշխատանքների արդյունքների հանրահռչակմանը նպաստում, գիտայիետազոտական ուղղությամբ համագործակցային կապերի ընդլայնում:<br>2.4.2. Հետազոտողների գործունեության համապատասխան պայմանների ապահովում և միջավայրի ձևավորում՝ հետազոտողների եվրոպական խարտիայի սկզբունքներին համապատասխան: | 2024-2025, ուսումնական տարի | Ուսումնագիտական գծով պրոռեկտոր, դեկաններ, ֆակուլտետների խորհուրդներ, ԱՔԲ, ՈԱԲ, ՄԿԾ-ների ղեկավարներ, դասախոսներ, հաշվապահություն: | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Եվրոպական հետազոտական տարածքին (EURAXESS), դասախոսների և ուսանողների գիտական, հետազոտական գործունեության սկզբունքների համապատասխանեցում Հետազոտողների եվրոպական խարտիայի դրույթներին, | 2.4.3. ԳՊՀ-ի Եվրոպական հետազոտական տարածքին (EURAXESS) ինտեգրում, գիտահետազոտական գործունեության ոլորտի միջազգայնացում: | | | | | |
| | 2.5. ‹‹Բաց գիտություն›› համակարգի բաղադրիչների աստիճանական ներդրում, գիտահետազոտական աշխատանքների հրապարակում հղման բարձր գործակից ունեցող պարբերականներում, որոնք ներառված են Web of Science, Scopus, Crossref, РИНЦ և այլ համակարգերում, | 2.5.1. ԳՊՀ-ում ‹‹Բաց գիտության›› մշակույթի տարածում, հետազոտողների մոտ գիտական միջավայրի նկատմամբ վստահության ձևավորում:<br>2.5.2. ԳՊՀ ներքին և արտաքին շահակիցներին ‹‹Բաց գիտության›› համակարգի բաղադրիչների սկզբունքներին և կանոններին ծանոթացում, լրացական դասընթացների կազմակերպում, գիտահետազոտական համապատասխան ոլորտի անհրաժեշտ իրազեկություններով օժտված փորձագետների ներգրավմամբ:<br>2.5.3. «Բաց գիտությանն» աջակցող մեխանիզմների մշակում, որոնք կնպաստեն ԳՊՀ հետազոտողների մրցունակության ապահովմանը: | 2023-2024 ուսումնական տարի | Ուսումնագիտական գծով պրոռեկտոր, դեկաններ, ֆակուլտետների խորհուրդներ, ԱՔԲ, ՄԿԾ-ների ղեկավարներ, դասախոսներ, հաշվապահություն: | | | |
| | 2.6. միջազգային գիտական, հետազոտական ծրագրերին համալսարանի դասախոսների և ուսանողների մասնակցության ապահովում և խրախուսում, նրանց գրանցում միջազգային ակադեմիական հարթակներում (Google Scholar, ORCID, ResearchGate, Publons, Elsevier, SSRN, HAL, Elibrary, Academic.edu, այլ), | 2.6.1. ՀՀ և օտարերկրյա բուհերի, գիտահետազոտական ինստիտուտների և մասնավոր կազմակերպությունների հետ համատեղ գիտահետազոտական դրամաշնորհային նախագծերի իրականացում:<br>2.6.2.Ներքին և արտաքին գիտական հաղորդակցության (Science communication) ժամանակակից մեխազմների ներդրմամբ՝ պրոֆեսորադասախոսական կազմի հետազոտական կարողությունների և հմտությունների զարգացում: | 2023-2024, 2024-2025, ուսումնական տարիներ | Գիտական խորհուրդ, ուսումնագիտական գծով պրոռեկտոր, ԱՔԲ, ՄԿԾ ղեկավարներ, դեկաններ, հաշվապահություն: | | | |
| | 2.7. սկսնակ դասախոսների գիտական ներուժի զարգացում, գիտական կադրերի պատրաստում, | 2.7.1.ԳՊՀ տեղեկատվության փոխանակման հնարավորությունների ընդլանում՝ գիտահետազոտական նպատակներով շարժունության ծրագրերի շրջանակի ընդլայնման, վերապատրաստումների միջոցով: | 2023-2024, 2024-2025 ուսումնական տարիներ | Ուսումնագիտական գծով պրոռեկտոր, դեկաններ, ֆակուլտետների խորհուրդներ, ԱՔԲ, | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 2.7.2.Հաշվետվողականության համարժեք գործիքակազմի, մասնագիտական ուղղորդման (մենթորության) գործիքակազմի մշակում և ներդրում:<br>2.7.3 Դասախոսի ուսումնագիտական բեռնվածության (պարտադիր հետազոտական բաղադրիչի ներառմամբ), և վարձատրության հաշվարկման մեթոդաբանություն/նորմատիվի մշակում և գործարկում<br>2.7.4.Ակադեմիական բարեվարքության և ակադեմիական գրագրության դեմ պայքարի կարողությունների զարգացում: | | ՈԱԲ, ՄԿԾ-ների ղեկավարներ, դասախոսներ: | | | | |
| | 2.8.Համալսարանում գիտահետազոտական գործունեության որակի մշտադիտարկման և գնահատման համակարգի բարելավում ու արդիականացում, մատենագիտական (բիբլիոմետրիկայի), իմաստաչափական (սեմանտոմետրիկայի) և այլընտրանքային (ալտմետրիկայի) չափումների մեթոդներով գիտահետազոտական աշխատանքի արդյունքների և որակի գնահատում, | 2.8.1.ԳՊՀ գիտական պարբերականների համար էլեկտրոնային համակարգի ստեղծում, ԳՊՀ գիտական պարբերականում տպագրության ներկայացվող հոդվածների ստուգում՝ հակագրագողության ծրագրերով:<br>2.8.2. Հստակ քաղաքականության, ընթացակարգերի և համապատասխան մեխանիզմների մշակում, որը միտված կլինի չափելու և գնահատելու ԳՊՀ դասախոսների գիտահետազոտական գործունեության արդյունավետությունը, ստացված վերջնարդյունքները և դրանց ազդեցությունը: | 2023-2024 ուսումնական տարի | Ուսումնագիտական գծով պրոռեկտոր, դեկաններ, ֆակուլտետների խորհուրդներ, ԱՔԲ, ՈԱԲ, ՄԿԾ-ների ղեկավարներ, դասախոսներ: | | | | |
| | 2.9.Համալսարանի գիտական պարբերականում տպագրության ներկայացվող հոդվածների չափանիշների վերանայում, առաջադրվող բովանդակային, մեթոդական, էթիկական պահանջները միջազգային գիտաչափական տվյալներին համապատասխանեցում, տպագրվող նյութերի թվային օբյեկտի նույնականացուցչի (ԹՕՆ՝ DOI-Digital Object Identifier) և համընդհանուր տասնորդական դասիչի | 2.9.1. ԳՊՀ-ի կողմից հրատարակվող գիտական հանդեսների և ժողովածուների որակը ազգային և միջազգային շտեմարանների պահանջներին համապատասխանեցում:<br>2.9.2.Ինստիտուցիոնալ մակարդակում համապատասխան քաղաքականության, ռազմավարության, մեխանիզմների և գործիքների մշակում և կիրառում որոնք կնպաստեն ԳՊՀ դասախոսների գիտահետազոտական գործունեությունից ստացվող վերջնարդյունքների արդյունավետ տեղաբաշխմանը շտեմարաններում և տվյալների բազաներում: | 2022-2023, 2023-2024 ուսումնական տարիներ | Ուսումնագիտական գծով պրոռեկտոր, դեկաններ, ֆակուլտետների խորհուրդներ, ԱՔԲ, ՈԱԲ, ՄԿԾ-ների ղեկավարներ, դասախոսներ: | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | (ՀՏԴ՝ UDC-Universal Decimal Classification) ապահովում: | | | | | | | |
| | 2.10. Համալսարանի գիտահետազոտական և կրթական գործընթացների կազմակերպման փուլերի թվայնացում, ‹‹Վիրտուալ համալսարան›› համակարգի աստիճանական գործարկում, ԳՊՀ էլեկտրոնային ուսուցման (Learn.gsu.am) համակարգի ծրագրային և տեխնիկական նոր հիմքերի ու լուծումների ապահովում, ըստ անհրաժեշտության հեռավար և զուգակցված ուսուցման արդյունավետ կազմակերպում, կրթական արդի տեխնոլոգիաների, հետազոտական նորագույն մեթոդների կիրառում: | 2.10.1.Գիտական գործունեության արդյունավետության գնահատման նոր համակարգի մշակում և ներդնում:<br>2.10.2.Ըստ գիտությունների հետազոտական ոլորտների՝ հետազոտական նոր ուղղությունների, այդ թվում ՏՀՏ նորարարական ուղղությունների զարգացում՝ ընդլայնելով միջբուհական համագործակցությամբ միջգիտակարգային հետազոտությունների իրականացումը, միջազգայնացումը և գիտական արտադրանքի առևտրայնացումը: | 2022-2023, 2023-2024 ուսումնական տարիներ | Ուսումնագիտական գծով պրոռեկտոր, ՏՏ բաժնի վարիչ, ՄԿԾ ղեկավարներ, դեկաններ, ամբիոնների վարիչներ: | | | | |
| **III. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԻՉՆԵՐԸ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ, ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ, ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ** | | | | | | | | |
| Նպատակը՝<br>3.1. Համալսարանի կառավարման համակարգի բարելավում, արտակարգ իրավիճակներում համալսարանի անխափան գործունեության ապահովում, ըստ անհրաժեշտության ճգնաժամային կառավարման գործիքների կիրառում:<br>3.2. Համալսարանի ֆինանսատնտեսական գործունեության արդյունավետության բարձրացում, ԳՊՀ ֆինանսական կայունության պահպանում: | | | | | | | | |
| | 3.1.ԳՊՀ կառավարման իրավական հիմքերի կատարելագործում՝ ՀՀ օրենսդրական կարգավորումներին համապատասխան, | 3.1.1. ԳՊՀ կառուցվածքային բոլոր ստորաբաժանումների իրավասությունների և գործառույթների շրջանակների վերանայում՝ վերհանելով բարելավման կարիք ունեցող ոլորտները:<br>3.1.2.Գավառի պետական համալսարանի 2023-2027թթ. ռազմավարական ծրագրի իրականացման գործողությունների տարեկան և միջնաժամկետ մշտադիտարկման պլանի մշակում և գործարկում, արդյունքների վերլուծություն, հրապարակում:<br>3.1.3.Մշտադիտարկման արդյունքների հաշվառմամբ բարելավման ծրագրերի մշակում և իրականացում: | 2023-2024 ուսումնական տարի | Ռեկտորատ, Մարդկային ռեսուրսների կառավարման բաժնի վարիչ, ուսումնագիտական գծով պրոռեկտոր, գիտական խորհուրդ, դեկաններ, ՈԱԲ: | Համալսարանի ֆինանսական ռիսկերի կանխարգելման համար գործող կառուցակարգ | 27.000.000 | Անբավարար ֆինանսական միջոցներ: | 3.1. ԳՊՀ-ում առկա անվտանգ և հասանելի սոցիալական, ֆիզիկական ու վիրտուալ միջավայր,<br>3.2. դասախոսների վարկանիշավորման ներդրված և գործարկվող համակարգ,<br>3.3. համալսարանի տարեկան բյուջեում զարգացման ծրագրերի հատկացումների աճ: |
| | 3.2.նորագույն տեխնոլոգիաների միջոցով համալսարանի | 3.2.1. ԳՊՀ ներքին կառավարման էլեկտրոնային տեղեկատվական համակարգի մշակում և ներդրում, | 2022-2023, 2023-2024 | Ուսումնագիտական գծով պրոռեկտոր, | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | վարչարարության արդյունավետության բարձրացում, | 3.2.2. ԳՊՀ կառուցվածքային ստորաբաժանումների առաջընթացը գնահատող կատարողականի արդյունքային ցուցանիշների (ԿԱՑ) համակարգի և դրանց արդյունքով խրախուսման համակարգ սահմանելու մեխանիզմի մշակում՝ ելնելով ՀՀ կրթության ազգային քաղաքականության և բուհի ռազմավարական առաջնահերթություններից,<br>3.2.3. վիճակագրական և այլ տվյալների պարբերական մուտքագրում ներքին կառավարման համակարգ, վերլուծություն և հրապարակում: | ուսումնական տարիներ | ՏՏ բաժնի վարիչ, ՄԿԾ ղեկավարներ, դեկաններ, ամբիոնների վարիչներ, ՈԱԲ: | | | | |
| | 3.3.Համալսարանի աշխատակազմի և ուսանողների համար անվտանգ միջավայրի ապահովում, անվտանգության համակարգերի արդիականացում, | 3.3.1. ԳՊՀ ընդհանուր անվտանգության, մուտքի և ելքի վերահսկման համակարգերի բարելավում:<br>3.3.2 Դասախոսների և ուսանողների համար անվտանգ կրթական միջավայրի ապահովում:<br>3.3.3.ԳՊՀ հանրակացարանում հանգստի կազմակերպման համար անհրաժեշտ պայմանների ապահովում: | 2022-2023, 2023-2024 ուսումնական տարի | Ուսումնագիտական գծով պրոռեկտոր, ԱՔԲ, ՄԿԾ ղեկավարներ, դեկաններ, ՈԱԲ հաշվապահություն: | | | | |
| | 3.4.Համալսարանի զարգացման ծրագրերի իրագործման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների և տնտեսական ռեսուրսների ապահովում, | 3.4.1. ԳՊՀ ֆինանսական կայունության բարելավում՝ աստիճանաբար ավելացնելով ու բազմազանեցնելով ֆինանսական հոսքերը՝ օրենքով չարգելված աղբյուրներից:<br>3.4.2. ԳՊՀ-ում կրթական նորարարությունների խթանման ծրագրերի մշակում՝ դիմելով միջազգային, հասարակական ու այլ ազգային և միջազգային կազմակերպություններին՝ ֆինանսական աջակցության նպատակով:<br>3.4.3. ԳՊՀ ձեռնարկատիրական գործունեության և մասնավոր հատվածի հետ համագործակցության համար մեխանիզմների մշակում և գործարկում: | 2023-2025 թթ. | Գիտական խորհուրդ, ուսումնագիտական գծով պրոռեկտոր, ԱՔԲ, ՄԿԾ ղեկավարներ, դեկաններ, հաշվապահություն: | | | | |
| | 3.5.Համալսարանի ֆինանսական հոսքերի ավելացում՝ բուհի գործունեության ոլորտների և ձևերի բազմազանեցման, վճարովի անցանց և առցանց կրթական, խորհրդատվական, փորձագիտական ծառայությունների, մասնագիտական աջակցության այլ ծրագրերի | 3.5.1. ԳՊՀ և գործարար միջավայրի համագործակցության խթանում, մասնավոր ոլորտի կազմակերպությունների, գործատուների շրջանում կատարել հետևողական աշխատանք՝ ուսումնական և այլ գործընթացներում լրացուցիչ ռեսուրսներ ներգրավելու նպատակով:<br>3.5.2 ԳՊՀ շրջանավարտների աջակցությամբ համատեղ միջոցառումների և ծրագրերի իրականացում՝ ներգրավելով լրացուցիչ ռեսուրսներ: | 2022-2023, 2023-2024 ուսումնական տարի | Գիտական խորհուրդ, կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներ, ուսումնագիտական գծով պրոռեկտոր, ԱՔԲ, ֆակուլտետային և համալսարանական | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | իրականացման, համալսարանի ակտիվների արդյունավետ կառավարման, միջազգային կառույցների, դրամաշնորհատու կազմակերպությունների հետ նպատակային աշխատանքի և այլընտրանքային հոսքերի ապահովման՝ արտաբյուջետային ֆինանսավորում ներգրավելու, պետական բյուջեի, բարեգործական կազմակերպությունների, հիմնադրամների, հովանավորների և այլ միջոցներով, | | | մեթոդական խորհուրդ ներ, ամբիոններ, մասնագիտական կրթական ծրագրերի ղեկավար ներ, ՈԱԲ, հաշվապահություն, ԳՊՀ շրջանավարտների միություն: | | | | |
| | 3.6. մարդկային ռեսուրսների կայունության ապահովում, աշխատակազմը երիտասարդ մասնագետներով համալրում, ուսանող-դասախոս հարաբերակցության հնարավորինս մոտեցում միջազգայնորեն ընդունելի միջին ցուցանիշին, աշխատակիցների կարողությունների շարունակական, նպատակային զարգացում, | 3.6.1. Վարչական և պրոֆեսորադասախոսական կազմերի մրցութային ընտրության ընթացակարգերի վերամշակում, կիրառում,<br>3.6.2. ԳՊՀ պրոֆեսորադասախոսական և վարչական կազմերի մասնագիտական զարգացման դասընթացների մշակում և վերապատրաստումների իրականացում:<br>3.6.3. ԳՊՀ պրոֆեսորադասախոսական և վարչական կազմերի գործունեության վերլուծություն իրականացում՝ վերհանելով բացթողումները, ուժեղ կողմերը և առաջադրելով կատարողականի ու կառավարման հմտությունների բարելավման նոր ուղիներ:<br>3.6.4 ԳՊՀ պրոֆեսորադասախոսական և վարչական կազմերի ընդհանուր զարգացման ծրագրերի մշակում և իրականացում: | 2022-2023, 2023-2024 ուսումնական տարի | Գիտական խորհուրդ, կառուցվածքային ստորաբաժանումնե րի ղեկավարներ, ուսումնագիտական գծով պրոռեկտոր, ԱՔԲ, ֆակուլտե տային և համալսարանական մեթոդական խորհուրդ ներ, ամբիոններ, մասնագիտական կրթական ծրագրերի ղեկավար ներ, ՈԱԲ, հաշվապահություն, ՄՌԿԲ: | | | | |
| | 3.7.Համալսարանի՝ որպես գործատուի պարտականությունների բարեխիղճ կատարում, պրոֆեսորադասախոսական, | 3.7.1.ԳՊՀ ներքին կարգապահական կանոնների, ընթացակարգերի վերանայում, բոլոր գործընթացների իրավական հիմքերի ապահովում, հստակ կարգավորում: | 2022-2023, 2023-2024 ուսումնական տարի | Գիտական խորհուրդ, կառուցվածքային ստորաբաժանումնե րի ղեկավարներ, | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ուսումնաօժանդակ և վարչատնտեսական անձնակազմի իրավունքների և օրինական շահերի պաշտպանություն, | | | ուսումնագիտական գծով պրոռեկտոր, ԱՔԲ, ֆակուլտե տային և համալսարանական մեթոդական խորհուրդ ներ, ամբիոններ, մասնագիտական կրթական ծրագրերի ղեկավար ներ, Որակի ապահովման բաժին,ՄՌԿԲ: | | | | |
| | 3.8.Համալսարանի պրոֆեսորադասախոսական, վարչական անձնակազմերի անդամների և տարբեր տարակարգերի աշխատակիցների գործունեության արդյունքների գնահատման, նյութական և բարոյական խրախուսման նոր միջոցների ու գործիքների կիրառում, | 3.8.1.ԳՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական զարգացումը խթանելու նպատակով աշխատանքի վարձատրության և խրախուսման տարբերակման մեխանիզմների մշակում և ներդրում:<br>3.8.2.ԳՊՀ վարչական և պրոֆեսորադասախոսական կազմերի կատարողականի գնահատման և մասնագիտական զարգացման բազմագործոն համակարգի և համապատասխան կրթության որակի ապահովման մեխանիզմների կատարելագործում: | 2022-2023, 2023-2024 ուսումնական տարիներ | Ուսումնագիտական գծով պրոռեկտոր, դեկաններ, ֆակուլտետների խորհուրդներ, ԱՔԲ, ՈԱԲ, հաշվապահություն: | | | | |
| | 3.9.ԳՊՀ ֆինանսական, նյութատեխնիկական միջոցների կառավարման, ներբուհական տնտեսության կազմակերպման, գնումների կատարման կառուցակարգերի, էլեկտրոնային հաշվապահության գործող ծրագրի կատարելագործում՝ ապահովելով դրա ծրագրային կապակցումը կրթական, հետազոտական գործընթացների էլեկտրոնային | 3.9.1. ԳՊՀ բոլոր ուղղություններով գործունեության հաշվետվությունների կազմման, բովանդակային և ընթացակարգային մեխանիզմների բարելավում:<br>3.9.2. ԳՊՀ ներքին կառավարման տեղեկատվական համակարգի մշակում, գործարկում, վիճակագրական և այլ տվյալների պարբերական մուտքագրում, վերլուծություն և հրապարակում:<br>3.9.3.ԳՊՀ վարչական և պրոֆեսորադասախոսական կազմերի գործունեության արդյունավետության գնահատման և խրախուսման բազմագործոն համակարգի մշակում և գործարկում: | շարունակա կան գործընթաց | Ուսումնագիտական գծով պրոռեկտոր, ՏՏ բաժնի վարիչ, ՄԿԾ ղեկավարներ, դեկաններ, ամբիոնների վարիչներ, հաշվապահություն: | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | կառավարման ծրագրային համակարգին, | | | | | | | |
| | 3.10.ԳՊՀ ենթակառուցվածքների զարգացում, կրթական, գիտահետազոտական, նյութատեխնիկական, տեխնոլոգիական և այլ ռեսուրսների շարունակական համալրում ու արդիականացում, ներառական կրթության կազմակերպման համար անհրաժեշտ պայմանների ստեղծում, | 3.10.1.ԳՊՀ ենթակառուցվածքների, մշակութային միջոցառումների և մարզական պարապմունքների դահլիճների վերանորոգում և կահավորում՝ համապատասխանեցնելով ներառականության պահանջներին:<br>3.10.2.Հատուկ կարիքներ ունեցող ուսանողների համար մատչելի կրթական միջավայրի, սննդի և հանրակացարանային պայմանների ապահովում: | շարունակական գործընթաց | Գիտական խորհուրդ, ուսումնագիտական գծով պրոռեկտոր, ԱՔԲ, ՄԿԾ ղեկավարներ, դեկաններ, հաշվապահություն: | | | | |
| | 3.11. Համալսարանի տեխնիկական վերազինում, տեղեկատվական արդի տեխնոլոգիաներով հագեցած լսարանների կահավորում բոլոր մասնաշենքերում, ռեսուրսախնայող տեխնոլոգիաների ներդրում, նվազ ծախսատար սարքերի ու սարքավորումների օգտագործում, ՄԿԾ-ների իրականացման, հետազոտական աշխատանքների կատարման համար անհրաժեշտ կրթական և հետազոտական միջավայրի շարունակական բարելավում: | 3.11.1.ԳՊՀ լաբորատորիաների և լսարանների վերանորոգում և վերազինում, արդի չափանիշներին համապատասխանեցում:<br>3.11.2.ԳՊՀ-ում լաբորատոր փորձերի կատարման համար անհրաժեշտ ռեսուրսների, ուսումնամեթոդական ձեռնարկների և ուղեցույցների ձեռքբերում:<br>3.11.3.Դրամաշնորհային ֆինանսավորմամբ ԳՊՀ ենթակառուցվածքների բարելավում՝ ներառյալ առողջապահական, հանրակացարանային, հանրային սննդի ու հանգստի կազմակերպման և այլ ծառայություններ մատուցող ենթակառուցվածքները: | շարունակական գործընթաց | Ուսումնագիտական գծով պրոռեկտոր, դեկաններ, ֆակուլտետների խորհուրդներ, ԱՔԲ, ՄԿԾ-ների ղեկավարներ, դասախոսներ, հաշվապահություն: | | | | |
| **IV. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԻՉՆԵՐԸ ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ, ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ** | | | | | | | | |
| **Նպատակը՝**<br>4.1. Համալսարանի հանրային պատասխանատվության բարձրացում՝ մարզի բնակչության տարբեր շերտերի կրթական կարիքների բավարարմանն ուղղված ծրագրերի իրականացման, հանրությանը որակյալ կրթական, սոցիալ-մշակութային ծառայությունների մատուցման, համալսարանի աշխատակիցներին և ուսանողներին սոցիալական աջակցության, համալսարանի նկատմամբ հանրային վստահության աճի և Գավառի պետական համալսարանի բարի համբավի ամրապնդման միջոցով:<br>4.2. Համալսարանի արտաքին կապերի ակտիվացում՝ համագործակցության աշխարհագրության ընդլայնման, ԳՊՀ պրոֆեսորադասախոսական, ուսումնաօժանդակ անձնակազմերի անդամների և ուսանողների միջազգային ակադեմիական շարժունության խթանման, օտարալեզու մասնագիտական կրթական ծրագրերի ավելացման և արտասահմանցի ուսանողների ներգրավման, համալսարանի միջազգայնացմանը նպատակաուղղված տարբեր ծրագրերի իրականացման միջոցով: | | | | | | | | |
| | 4.1.Համալսարանի եկամուտների, բարեգործական | 4.1.1. Արտասահմանյան գործընկերների, միջազգային դրամաշնորհատու կազմակերպությունների հետ | 2023-2024<br>2024-2025 | Ուսումնագիտական գծով պրոռեկտոր, Որակի | ԳՊՀ համագործակցության | 70.000.000 | լրացուցիչ կրթական ծրագրերի | 4.1. Համալսարանի հետ համագործակցող |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | հիմնադրամների և այլ աղբյուրների հաշվին սոցիալապես անապահով ուսանողների ուսման վարձավճարների զեղչման, սովորողների նյութական և բարոյական խրախուսման նոր համակարգի մշակում և ներդրում, | համագործակցության հնարավորությունների ուսումնասիրում և ընդլայնում՝ ֆինանսավորում ստանալու նպատակով:<br>4.1.2.Սոցիալապես անապահով ուսանողների նկատմամբ սահմանված կարգով զեղչերի կիրառում:<br>4.1.3.ԳՊՀ-ում շարունակական մասնագիտական զարգացման ծրագրերի համար անհրաժեշտ նյութատեխնիկական պայմանների ապահովում և ծրագրերի իրականացում, խորհրդատվական ծառայությունների մատուցում:<br>4.1.4.Հանրային սննդի և մատչելի հանրակացարանային պայմանների ապահովում: | ուսումնական տարիներ | ապահովման բաժին, Արտաքին կապերի և լրատվության բաժին, դեկաններ, ամբիոնների վարիչներ, ֆակուլտետների խորհուրդներ, ՈՒԽ, հաշվապահություն: | պայմանագրեր արբեր կազմակեր պությունների հետ, ՀՀ տարածքում բուհի բարի համբավի առկայություն | | նկատմամբ հանրային հետաքրքրությ ան պակաս | կազմակերպությունների թվաքանակի աճ,<br>4.2.միջազգային կրթական ծրագրերում ներգրավված ուսանողների, դասախոսների, համալսարանի աշխատակիցների թվի աճ,<br>4.3.Համալսարանի իրականացրած լրացուցիչ կրթական ծրագրերի քանակի աճ,<br>4.4.Համալսարանի ուսանողների և աշխատակիցների համար գործող սոցիալական ծրագրերի ավելացում: |
| | 4.2.ԳՊՀ պրոֆեսորադասախոսական, ուսումնաօժանդակ անձնակազմերի անդամների և ուսանողների միջազգային ակադեմիական շարժունության խթանում, օտարալեզու մասնագիտական կրթական ծրագրերի, առանձին մոդուլների, լրացական կրթական ծրագրերի ավելացում և արտասահմանցի ուսանողների ներգրավում, | 4.2.1.ԳՊՀ սովորողների և պրոֆեսորադասախոսական կազմի, վարչական աշխատակիցների ակադեմիական շարժունության ակտիվացում:<br>4.2.2. Միջազգային, այդ թվում՝ ԵԲԿՏ-ի միջբուհական համագործակցության, շարժունության, գիտահետազոտական և այլ ծրագրերին ԳՊՀ-ի ակտիվ մասնակցության խթանում:<br>4.2.3.Արտերկրում կազմակերպվող գիտաժողովներին, սեմինարներին, վերապատրաստման դասընթացներին, շարժունության ծրագրերին ԳՊՀ աշխատակազմի մասնակցության ապահովում:<br>4.2.4.Փոխանակման ծրագրերում ներգրավված սովորողների համար ուսումնառության արդյունքների ճանաչման գործընթացի դյուրացում և կատարելագործում: | 2022-2023, 2023-2024 ուսումնական տարիներ | Ուսումնագիտական գծով պրոռեկտոր, Որակի ապահովման բաժին, Արտաքին կապերի և լրատվության բաժին, դեկաններ, ամբիոնների վարիչներ, ֆակուլտետների խորհուրդներ, հաշվապահություն: | | | | |
| | 4.3. Համանման կրթական ծրագրեր իրականցնող բուհերի հենանիշային ուսումնասիրություն, արդյունքների վերլուծություն, համադրում և առաջավոր փորձի կիրառում, Համալսարանի ինտեգրում եվրոպական գիտակրթական տարածքին, | 4.3.1.ԳՊՀ կրթական ծրագրերին համանման ծրագրեր իրականացնող առաջավոր բուհերի ցանկի ճշգրտում, համադրական վերլուծության պայմանների սահմանում,<br>4.3.2.Համադրական վերլուծության իրականացում, արդյունքների տեղայնացում, Համալսարանի գործընթացների և ենթակառուցվածքների բարելավում,<br>4.3.3.Օտարերկրյա գործընկեր համալսարանների և կազմակերպությունների հետ պայմանագրերի հիման վրա ետազոտական ծրագրերի իրականացում:<br>4.3.4.Օտարերկրացի ուսանողների համար բակալավրիատում և մագիստրատուրայում | 2024-2025, ուսումնական տարի | Ուսումնագիտական գծով պրոռեկտոր, Որակի ապահովման բաժին, Արտաքին կապերի և լրատվության բաժին, դեկաններ, ամբիոնների վարիչներ, ֆակուլտետների խորհուրդներ, հաշվապահություն: | | | | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | օտար լեզվով դասավանդման հնարավորությունների ընդլայնում և և համապատասխան պայմանների ստեղծում օտար լեզվով դասավանդվող կրթական ծրագրերի համար,<br>4.3.5.Միջազգային գիտաժողովների կազմակերպում:<br>4.3.6.Միջազգային համագործակցությամբ մագիստրոսական թեզերի համաղեկավարում: | | | | | | | |
| | 4.4.‹‹Համալսարան-դպրոցներ, քոլեջներ, այլ ուսումնական հաստատություններ›› բազմաբնույթ համագործակցության ապահովում, գործընկեր դպրոցների ցանկի ընդլայնում, մանկավարժական խորհուրդների, մասնագիտական մեթոդմիավորումների հետ գործընկերային հարաբերությունների սերտացում, | 4.4.1. Դպրոցների շրջանավարտների համար նախապատրաստական դասընթացների կազմակերպում և իրականացում:<br>4.4.2. ՀՀ Գեղարքունիքի մարզի ավագ և հիմնական դպրոցների ավարտական դասարանների աշակերտների հետ հանդիպումների կազմակերպում՝ մասնագիտական կողմնորոշման նպատակով:<br>4.4.3. Սովորողների պրակտիկաների կազմակերպման նպատակով ՀՀ մարզերի հանրակրթական դպրոցների հետ համագործակցության պայմանագրեր և համաձայնագրերի ավելացում:<br>4.4.4. Համալսարանի կրթական ռեսուրսների՝ համակարգչային լսարանների, բնագիտության, սխեմատեխնիկայի, կրիմինալիստիկայի լաբորատորիաների, պատմագիտական թանգարանի, հոգեբանամանկավարժական կենտրոնի, լինգաֆոնային մուլտիմեդիա լսարանի, քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում առաջին բուժօգնության լսարանի, գրադարանների, ընթերցասրահի և այլ հնարավորությունների ծառայեցում դպրոցականներին՝ մասնագիտական կողմնորոշման դասերի, սեմինարների, քննարկումների, բաց դասերի, ցուցադրական փորձերի անցկացման և այլ նպատակներով: | շարունակական գործընթաց | Ուսումնագիտական գծով պրոռեկտոր, ԱՔԲ, Արտաքին կապերի և լրատվության բաժին, ամբիոններ, հաշվապահություն, շրջանավարտների միություն և կարերիայի կենտրոն, ՈՒԽ, ՈՒԳԸ, հաշվապահություն: | | | | | |
| | 4.5 Համալսարանի իրականացրած ծրագրերի, գործունեության բոլոր ուղղություններով կատարված աշխատանքի վերաբերյալ հանրությանը օբյեկտիվ տեղեկատվության տրամադրում, | 4.5.1. ԳՊՀ-ի՝ հասարակայնության հետ կապերի նոր հայեցակարգի մշակում և գործարկում՝ բարելավելով ԳՊՀ գործունեության մասին հանրային իրազեկման մեխանիզմները:<br>4.5.2. ԳՊՀ պաշտոնական կայքէջում ստորաբաժանումների գործունեության մասին տեղեկատվության շարունակաբար համալրում և թարմացում՝ ԳՊՀ-ի գործունեության | շարունակական գործընթաց | Ուսումնագիտական գծով պրոռեկտոր, Որակի ապահովման բաժին, Արտաքին կապերի և լրատվության բաժին, դեկաններ, | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | հաշվետվողականության համակարգի կատարելագործում, գործընթացների հրապարակայնության և թափանցիկության ապահովում: | հաշվետվողականությունն ու թափանցիկությունը բարձրացնելու նպատակում: | | ամբիոնների վարիչներ, ֆակուլտետների խորհուրդներ, հաշվապահություն: | | | | |
| **V. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԻՉՆԵՐԸ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ** | | | | | | | | |
| **Նպատակը՝** 5.1. Համալսարանի հակակոռուպցիոն ծրագրի արդյունավետ իրականացում. համալսարանում ակադեմիական ազնիվ միջավայրի պահպանում, ԳՊՀ գործունեության բոլոր ոլորտներում օրինականության, սոցիալական արդարության, հրապարակայնության, հաշվետվողականության, ընդհանուր և գործարար բարեվարքության կանոնների պահանջների կատարում, Գավառի պետական համալսարանի՝ որպես հակակոռուպցիոն բուհի նկատմամբ հանրային վստահության ապահովում: | | | | | | | | |
| | 5.1. ԳՊՀ հակակոռուպցիոն ծրագրի արդյունավետ իրականացում, | 5.1.1.Հակակոռուպցիոն ծրագրի գործողությունների պլանի մշակում և իրականացում:<br>5.1.2. Հակակոռուպցիոն ծրագրի իրականացման մշտադիտարկման պլանի մշակում և գործարկում:<br>5.1.3. ԳՊՀ ակադեմիական ազնվության հայեցակարգի դրույթների հետևողականորեն կիրառում:<br>5.1.4. ԳՊՀ ուսանողների իրավագիտակցության բարձրացման ծրագրերի իրականացում:<br>5.1.5.Դասախոսների, ուսանողների, աշխատակիցների շրջանում հնարավոր կոռուպցիոն դրսևորումների վերաբերյալ անանուն հարցումների իրականացում, արդյունքների ամփոփում, համապատասխան կանխարգելիչ միջոցառումների ձեռնարկում: | շարունակական գործընթաց | Գիտական խորհուրդ, կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներ, ուսումնագիտական գծով պրոռեկտոր, ԱՔԲ, ֆակուլտետային և համալսարանական մեթոդական խորհուրդներ, ամբիոններ, մասնագիտական կրթական ծրագրերի ղեկավարներ, Որակի ապահովման բաժին, ՄՌԿԲ: | ակադեմիական ազնիվ միջավայր: | 1.000.000 | Իրավագիտակցության ցածր աստիճանը, իրազեկության պակասը | 5.1.Կրթական, ակադեմիական ազնիվ միջավայրի առկայություն,<br>5.2. կոռուպցիոն ռիսկերի կանխարգելման արդյունավետ գործող կառուցակարգերի կիրառում,<br>5.3. ներքին և արտաքին շահակիցների կողմից համալսարանում կոռուպցիոն վարքագծի դրսևորումների բացառում: |
| | 5.2.Համալսարանի գործունեության բոլոր ոլորտներում կոռուպցիայի ցանկացած դրսևորման բացառում, ակադեմիական ազնիվ, հակակոռուպցիոն միջավայրի պահպանում, | 5.2.1. Կոռուպցիոն ռիսկերի վերհանման, կանխարգելման և վերահսկման մեխանիզմների կատարելագործում և կիրառում, ԳՊՀ բարեվարքության կանոնների հստակեցում: | 2022-2023 ուսումնական տարի | Գիտական խորհուրդ, կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներ, ուսումնագիտական գծով պրոռեկտոր, ԱՔԲ, ֆակուլտե | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | տային և համալսարանական մեթոդական խորհուրդ ներ, ամբիոններ, մասնագիտական կրթական ծրագրերի ղեկավար ներ, Որակի ապահովման բաժին, ՄՌԿԲ: | | | | |
| | 5.3. ԳՊՀ էթիկայի կանոնների և համալսարանի ակադեմիական ազնվության հայեցակարգի դրույթների իրականացում, ներքին և արտաքին շահառուների հետ հարաբերություններում բարեվարքության սկզբունքների ու նորմերի պահպանում, | 5.3.1. ԳՊՀ-ի իրավունքների և օրինական շահերի նկատմամբ անձնական և կոլեկտիվ պատասխանատվության ձևավորում ու դրանց շարունակական ապահովում:<br>5.3.2.ԳՊՀ ներքին և արտաքին շահակիցների հետ պարբերական հանդիպումների կազմակերպում, համալսարանի ակադեմիական ազնվության հայեցակարգի դրույթների կիրառման արդյունքների քննարկում: | շարունակա կան գործընթաց | Գիտական խորհուրդ, կառուցվածքային ստորաբաժանումնե րի ղեկավարներ, ուսումնագիտական գծով պրոռեկտոր, ԱՔԲ, ֆակուլտե տային և համալսարանական մեթոդական խորհուրդ ներ, ամբիոններ, մասնագիտական կրթական ծրագրերի ղեկավար ներ, Որակի ապահովման բաժին, ՄՌԿԲ: | | | | |
| | 5.4.Համալսարանի կառավարման գործընթացների, որոշումների կայացման թափանցիկության և հաշվետվողականության ապահովում, | 5.4.1.ԳՊՀ հոգաբարձուների խորհրդի, գիտական խորհրդի, ռեկտորատի, կառուցվածքային ստորաբաժանումների նիստերի որոշումների, արձանագրությունների՝ ԳՊՀ պաշտոնական կայքէջում տեղադրում, համալրում:<br>5.4.2. ԳՊՀ հոգաբարձուների խորհրդի, գիտական խորհրդի, ռեկտորատի, բոլոր ստորաբաժանումների նիստերին արտաքին | շարունակակ ան գործընթաց | Գիտական խորհուրդ, կառուցվածքային ստորաբաժանումնե րի ղեկավարներ, ուսումնագիտական գծով պրոռեկտոր, ԱՔԲ, ֆակուլտե | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | շահակեցիների, ուսանողների մասնակցության ապահովում: | | տային և համալսարանական մեթոդական խորհուրդ ներ, ամբիոններ, մասնագիտական կրթական ծրագրերի ղեկավար ներ, Որակի ապահովման բաժին, ՄՌԿԲ: | | | | |
| | 5.5. Լրացուցիչ կրթական ծրագրերի իրականացման միջոցով հանրության իրավագիտակցության բարձրացմանը նպաստում: | 5.5.1. Իրավագիության բաժնի դասախոսների և ուսանողների միջոցով աշակերտների շրջանում իրավագիտակցության բարձրացման ծրագրերի մշակում և իրականացում,<br>5.5.2. ԳՊՀ-ում իրավագիտակցության և իրավական մշակույթի բարձրացմանը միտված բաց դասախոսությունների և հանրային քննարկումների պարբերաբար կազմակերպում: | 2022-2023, 2023-2024 ուսումնական տարիներ | Գիտական խորհուրդ, կառուցվածքային ստորաբաժանումնե րի ղեկավարներ, ուսումնագիտական գծով պրոռեկտոր, ԱՔԲ, ֆակուլտե տային և համալսարանական մեթոդական խորհուրդ ներ, ամբիոններ, մասնագիտական կրթական ծրագրերի ղեկավար ներ, Որակի ապահովման բաժին, ՄՌԿԲ, ՈՒԽ, ՈՒԳԸ: | | | | |